

զիին աշխարհ նոցին զ'ի դարուց հետէ ընթադրեալն յԱրաբացոց եւ 'ի Պարսից՝ թափելով փոյթ ընդ փոյթ անվկանդ թրովն, եւ ջախջախելով զջոխրս ամբարտաւանիցն բռնացելոց, եւ զհարկեցուցիչսն կարօտելոց՝ հարկատուս կարգելով. զամս քսան (1191-1210) անդու պատերազմելով 'ի դաշտի եւ առ պարսպօք, եւ միշտ յաղթական, զամենայն ընդարձակ եւ զհայաբուն գետահովիտն Երասխայ՝ թափեաց զերծոյց յայլազգի լծոյ, եւ անդրագոյնս անցեալ՝ ընդ արեւմուտս, նեղեաց եւ ընդ հարկաւ կացոյց զսուլտանն Կարնոյ՝ զեղբայր Իկոնիացոյն. ընդ արեւելս՝ «աւերէր գտունն Պարսից մինչեւ ցԱրտաւիլ քաղաք, առնլով 'ի նոցանէ զվրէժ արեան քրիստոնէից... զոհ լինել իշխանացն որք 'ի Նախջուանու եկեղեցիսն, եւ ... սուրբ քահանայիցն որ 'ի Բագուան զենեցան»²⁰⁵. եւ ընդ հարաւ՝ պաշարելով երբեմն զԽլաթ՝ զշահաստան Շահ-Արմէն կոչմամբ թագաւորեցելոցն. եւ յորժամ եղբայր իւր եւ գործակից Իւանէ Աթաբէկ՝ անզգուշութեամբ շրջելով՝ անկաւ յորոզայթ եւ ըմբռնեցաւ, եւ մեծապէս խնդային պաշարեալքն, պատգամ առ նոսա առաքեաց Չաքարէ. «Եթէ հանէք զեղբայրն իմ 'ի քաղաքէդ յայդմանէ (զերի առաքելով առ սուլտանս), կամ կորուսանէք, զհող երկրիդ՝ 'ի Վրաց կողմանս տանիմ, եւ անմարդ արարից զձեզ 'ի մարդկանէ: Եւ երկուցեալ նոցա ... խնդրեցին զդուստր Իւանէի 'ի կնութիւն ... առին պատանդս, եւ արձակեցին զԻւանէ»²⁰⁶.– Արդ այս այր կորովի սրտիւ եւ բարեպաշտ հաւատով, հանապազ արտաքոյ ոստանին 'ի դաշտս մարտից դեզերելով՝ ոչ կարէր ըստ եռանդուն հոգոյն հաղորդ եւ աստուածայնոցն գտանել պաշտամանց. զի եւ վարդապետք ժամանակին՝ տգիտաբար անկանոն կամ անհրաման համարէին տանել 'ի բանակն սպասս պատշաճաւորս եւ պատարագ մատուցանել, որպէս Վրացիքն առնէին. եւ ընդ այս խանդացեալ զչարէր սպասալարն՝ վարիչ երկոցուն եւս ազգացն. եհարց զհայր խոստովանութեան իւրոյ՝ զզերահամբաւեալն 'ի ժամանակին յամենայն վարդապետս արեւելից եւ զարժանաւորն՝ Մխիթար Գոշ. սա օրինաւոր եցոյց զխնդիրն, այլ զի 'ի վաղուց հետէ խափանեալ էր սովորութիւնն 'ի Հայս, ոչ իշխեաց ինքնին հրաման տալ: Յայնժամ գրեաց Չաքարէ առ կաթողիկոսն Յովհաննէս, ոչ զիտելով զմերժումն սորա, եւ առ Լեւոն թագաւոր. որ եւ անդէն

²⁰⁵ Ըստ բանից Վարդանայ պատմչի (Գլ. 29), որ ակնարկէ 'ի կոտորած միաբանիցն Ս. Յովհաննու Վանաց յԵգիտ ոստիկանէ:

²⁰⁶ Այս բանք են Կիրակոսի պատմչի: